ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2-Ա « 07 » հունվարի 2026 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ Հ.5 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ 14-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գյուլիզար Հաջոյանի լ/ա Քյարամ Ավդալյանի դիմումը՝ Հաղթանակ 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք հ.5 և Հաղթանակ 14-րդ փողոց թիվ 1ա հասցեներում գտնվող, Գյուլիզար Հաջոյանին սեփականության և 2024 թվականի փետրվարի 20-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.923 և հ.924 վկայագրերով փոխանցված հողամասերի սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի հ.Ա010323 և Ա069499 պետական ակտերը, 2024 թվականի փետրվարի 20-ի նոտարական հ.919 և հ.920 ակտերը, սեփականության և ըստ օրենքի ժառանգության իրավունքների հ.923 և հ.924 վկայագրերը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք հ.5 և Հաղթանակ 14-րդ փողոց թիվ 1ա հասցեներում գտնվող հողամասերի փաստացի մակերեսները կազմում են համապատասխանաբար 394.1քմ և 244.9քմ՝ պետական ակտերում ամրագրված 400.0քմ և 250.0քմ մակերեսների փոխարեն:

Քննարկվող հողամասերն համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 9-րդ գոտում:

ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ.1517-Ն որոշման համաձայն՝ Հաղթանակ 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք հ.5 և Հաղթանակ 14-րդ փողոց թիվ 1ա հասցեների հողամասերի ծակագրերն են՝ 01-007-0013-0005, 01-007-0037-0006:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/36605-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք հ.5 և Հաղթանակ 14-րդ փողոց թիվ 1ա հասցեներում գտնվող հողամասերի /տնամերձ/ սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 394.1քմ և 244.9քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ